

# ԹԵՅՐԱՆ - ԵՐԵՒԱՆ ԹՈՒՉՔԻ ԱՐԿԱԾԱՅԱՐՆԵՐՈՒ ԶՈԳԻԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՊԱՇՏՈՆ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

## **ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ**

Քրիստոսի Պայծառակերպութեան- Վարդավառի Տօսի առիթով կիրակի կարելի էր եղած հոգեհանգստեան պաշտօն կատարել ի յիշատակ Թեհրան - Երեւան թռիչք կատարող օդանավի արկածահարներուն համար, որ տեղի ունեցած էր 15 Յուլիս 2009 Չորեքշաբթի կեսօրուայ ժամերուն մօտ Իրանի հողերուն վրայ, մեծ սուգի մատնելով համայն հայ աշխարհը:

26 Յուլիս Կիրակի առաւօտ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցին լեցուն էր մասնաւորաբար սգաւոր պարսկահայերով, որոնք եկած էին իրենց հարազատներուն, ազգականներուն, բարեկամ եւ ծանօթներուն մեծ սուգը բաժնելու եւ իրենց յարգանքի տուրքը մատուցելու:

Եկեղեցւոյ եւ բակին մէջ երկու մեծ պաստառներու վրայ զատ զատ դրուած էր զոհուած 42 հայ ուղեւորներու նկարները, իսկ մոմավառութեան սեղանին մօտ պարսկահայերու կողմէ հիմնուած « Թորոնթոյի հայ Ակումբ »ին դրկած ծաղկեպսակն ալ զետեղուած էր:

Յընթացս Ս. Պատարագի եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քնյ. Չարգարեան աւուր պատշաճի իմաստալից քարոզ մը տուաւ, մասնաւորաբար ծանրացաւ օդանավի արկածի զոհերուն վրայ: Ապա յանուն Առաջնորդ Բագրատ Սրբազանի, ծխական խորհուրդի եւ յարակից մարմիններու վշտակցութիւնները յայտնեց հանգուցեալներու պարագաներուն:

Յաւարտ Ս. Պատարագի « Թորոնթոյի հայ Ակումբ »ի խնդրանքին համաձայն շատ տպաւորիչ եւ յուզումնալից Մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ արկածի զոհերէն՝ Արթուր Գրիգորեան, Կարինէ Մարգարեան, Աշոտ Ներսէսեան, Գրիգոր Բարսեղեան, Սուրէն Սողոյեան, Շողեր եւ Նայիրի Ստեփանեան, Նանա Անթաշեան, Էտուարտ Խաչիկ, Անահիտ եւ Քրիստինէ Տէր Յովհաննիսեան, Մարտիկ Տէր Յովհաննիսեան, Կարապետ ( Կարօ ) Ղուկասեան, Հէնրիկ Սիմօն Խաչիկեան, Մարօ ( Համասփիւռ ) Փուլատեան, Ալվարդ Նաւասարտեան, Արա Սիրոյեան, Թալին Կարապետեան, Արմէն եւ Վահէ Սարգիսեան, Թատէ Թիմաշ եւ Նայիրի Մայիլեան, Արշաւիր Մանասերեան, Յասմիկ Գոլոյեան, Ռայթ Եաղուպի Մասիհի, Լիլիթ Շահմուրատեան, Էտին Եաղուպի Մասիհի, Լուսիկ Վարդանեան Տարպիսեան, Արշաւիր Աւագեան, Ֆլոր Հայրապետ Յովսէփեան, Անոյշ Պապումեան, Մասիս Մաթեան, Վարդանոյշ Թահմազեան, Մելինէ Կարանեան, Ռամօն Թարոյեանց, Անէթ Աժանտ, Աննա Պօղոսեան, Ազատ Յովհաննիսեան, Արմէն ( Արմենուհի ) Սարգիսեան, Թաթուլ Սուրատեան, Էտվին Ասատուրեան, Լեւոն Դավիթեան, Արին եւ Անի Մելքոմ Ապկար, Ժորժիկ ( Իւրիկ ) Շահպազ եւ Չարմինէ Սուքիասեանի, ինչպէս նաեւ կարգ մը ազգայիններու հոգիներուն խաղաղութեան համար:

Արկածեալներու մէջ կը գտնուէին Թորոնթօ Էն ալ մայր մը ու իր զաւակը, որոնք իրենց ամառուայ արձակուրդէն օգտուելով Պարսկաստան գացած ու հոնկէ ալ Հայաստան կ'անցնէին:

Այնուհետեւ եկեղեցւոյ ներքնասրահին մէջ, Տէր Հօր օրհնութենէն ետք, «Թորոնթոյի հայ Ակումբ»ի տիկնանց կազմին կողմէ պատրաստուած հոգեհանգստեան հիւրասիրութիւնը տեղի ունեցաւ: